ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-733-05.03.2015-ՏՀ-010/0* և *Պ-733[1]-05.03.2015-ՏՀ-010/0*) վերաբերյալ:

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ այն հարկ վճարողները, որոնք նախկինում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն են ներկայացրել հարկային մարմին և մինչև հաշվետու ժամանակաշրջանի փետրվարի 20-ը համապատասխանաբար չեն ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ

հայտարարություն, հարկային մարմին գործունեությունը վերսկսելու մասին հայտարարություն ներկայացնելու դեպքում նույնպես կհամարվեն համապատասխանաբար շրջանառության հարկ վճարողներ կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ, եթե գործունեությունը վերսկսելու մասին հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում հարկային մարմին ներկայացնեն շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից ժամանակավորապես գործունեություն չիրականացնելու կամ գործունեությունը վերսկսելու դեպքերում հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացվելու հետ կապված հարաբերությունները գործող հարկային օրենսդրությամբ կարգավորված չեն: Այս առումով, ժամանակավորապես գործունեություն չիրականացնելու կամ գործունեությունը վերսկսելու դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկման և հարկային մարմնում վերջիններիս հաշվառման հետ կապված հարցերը համակարգային լուծում են պահանջում: Մասնավորապես, անհրաժեշտ է հարկային օրենսդրությամբ սահմանել ժամանակավորապես գործունեություն չիրականացնելու կամ գործունեությունը վերսկսելու դեպքերում հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացնելու պարտավորություն և կարգավորել այդ դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկման և հարկային մարմնում հարկ վճարողների կարգավիճակի ու հարկային պարտավորությունների հաշվառման հարցերը՝ բոլոր հարկատեսակների և հարկման համակարգերի մասով:

Նշված ընդհանուր կարգավորումների բացակայությունն է պատճառը, որ հարկային օրենսդրությամբ շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության

սուբյեկտ համարվելու առումով սահմանվել են միատեսակ կարգավորումներ, ինչը հնարավորություն է ընձեռում խուսափել հարկային մարմնում հարկ վճարողների կարգավիճակի, ինչպես նաև հարկային պարտավորությունների հաշվառման հետ կապված դժվարություններից և խառնաշփոթ իրավիճակներից:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում ենք, որ նպատակահարմար չէ վերանայել առանձին հարկման համակարգերի շրջանակներում գործելու ներկայումս սահմանված միատեսակ կանոնները՝ առանց ժամանակավորապես գործունեություն չիրականացնելու կամ գործունեությունը վերսկսելու դեպքերին վերաբերող ընդհանուր կարգավորումներ սահմանելու՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց այդ կարգավորումների անխուսափելիորեն առաջանալու են հարկային մարմնում հարկ վճարողների կարգավիճակի հաշվառման խնդիրներ, ինչն իրականացվող հարկային վարչարարության առումով ստեղծելու է լրացուցիչ դժվարություններ:

Միաժամանակ, հարկ է նկատել նաև, որ «Շրջանառության հարկի մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգավորումները որևէ կերպ չեն սահմանափակում տնտեսվարող սուբյեկտի՝ շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու հնարավորությունները: Մասնավորապես՝

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետը (մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը) կիրառվում է միայն այն դեպքում, եթե հարկային մարմինը հարկ վճարողին ծանուցել է նման վերջնաժամկետ սահմանված լինելու մասին: Եթե հարկային մարմինը ծանուցումը հարկ վճարողին ուղարկում է օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված

ժամկետներից հետո, ապա որպես շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվում է հարկ վճարողին ծանուցումը տրամադրելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ հարկային մարմնի կողմից ծանուցվում են ոչ միայն գործունեություն իրականացնող, այլև գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած հարկ վճարողները: Հետևաբար, ներկայումս գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած հարկ վճարողները նույնպես հնարավորություն ունեն հարկային մարմնի կողմից համապատասխան ծանուցումն ստանալուց հետո ներկայացնելու շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և համարվելու շրջանառության հարկ վճարող: Հարկ է նկատել նաև, որ, գործող կարգավորումների համաձայն, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած լինելու հանգամանքը տնտեսվարող սուբյեկտի՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցված համարվելու կարգավիճակը ոչ մի կերպ չի փոփոխում:

Համաձայն «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ նույն օրենքի 13.7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու պայմանը բավարարող անձն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ է համարվում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև այդ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում շրջանառության հարկ կամ ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե մինչև այդ տարվա փետրվարի 20-ը իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր: Այսինքն, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի համաձայն նույնպես տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն ունեն համարվելու ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ՝ առանց գործունեությունը ժամանակավորապես դադարեցված համարվելու կարգավիճակի փոփոխության:

Ինչ վերաբերում է քննարկման ներկայացված օրենքների նախագծերի առանձին դրույթներին, ապա հայտնում ենք, որ քննարկման ներկայացված տարբերակով օրենքների նախագծերի ընդունման դեպքում կստացվի, որ գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացնելուց հետո անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե պահպանված են միայն շրջանառության հարկ վճարողների դեպքում տարեկան իրացման շրջանառության 58.35 մլն դրամի շեմը չգերազանցելու, իսկ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների դեպքում՝ 18 մլն դրամի շեմը չգերազանցելու պայմանները: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նման կարգավորումների սահմանումը չի կարող գործել, քանի որ շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են նաև այլ սահմանափակումներ:

Օրենքների նախագծերում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ներկայումս իրականացվում են հարկային օրենսգրքի մշակմանն ուղղված աշխատանքներ, որոնց շրջանակներում վերանայվելու են հարկային հարաբերու-

թյունների գործող կարգավորումները, այդ թվում՝ նաև խնդրո առարկա հարցերի հետ կապված կարգավորումները:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վախթանգ Միրումյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող և (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել նաև ՀՀ ռեզիդենտ համարվող այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնք նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն, այնուհետև գործունեությունը վերսկսելու մասին իրենց հաշվառման վայրի հարկային մարմին համապատասխան հայտարարության ներկայացման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող և (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունները:

Նախագծերի ընդունմամբ տնտեսվարող սուբյեկտների կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու (վերսկսելու) համար կստեղծվի դրական մրցակցային միջավայր:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *դրական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է որոշակի ***դրական ազդեցություն:***

Նախագծով նախատեսվում է հարկային ոլորտում սահմանել որոշակի կարգավորումներ, մասնավորապես՝ առաջարկվում է գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած հարկ վճարողների կողմից համապատասխան գործունեությունը վերստին սկսելու դեպքում վերջիններիս ընձեռել հնարավորություն շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու նպատակով անհրաժեշտ հայտարարությունը ներկայացնել նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետից՝ հաշվետու տարվա փետրվարի 20-ից, հետո:

Նշված փոփոխությունների արդյունքում որոշակիորեն կկրճատվեն գործարար համայնքի ներկայացուցիչների գործունեությանը խոչընդոտող դրույթները, այդ թվում՝ կնվազի լրացուցիչ վարչարարությունը:

Եզրակացություն

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է սահմանել, որ այն հարկ վճարողները, որոնք նախկինում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն են ներկայացրել հարկային մարմին և մինչև հաշվետու ժամանակաշրջանի փետրվարի 20-ը համապատասխանաբար չեն ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմին հայտարարություն ներկայացնելու դեպքում նույնպես կհամարվեն համապատասխանաբար շրջանառության հարկ վճարողներ կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ, եթե գործունեությունը վերսկսելու մասին հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում հարկային մարմին ներկայացնեն շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն: Այսինքն, նախագծերով առաջարկում է սահմանել, որ փետրվարի 20-ից հետո շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար հայտարարություն ներկայացրած՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած տնտեսվարող սուբյեկտները նույնպես կարող են համարվել շրջանառության հարկ վճարողներ կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ինչպես նաև այն, որ ներկայումս գործող կարգավորումների համաձայն, շրջանառության հարկ վճարող համարվելու կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը պետք է ներկայացվի մինչև փետրվարի 20-ը (շրջանառության հարկի պարագայում նշյալ ժամկետում ծանուցված չլինելու դեպքում՝ ծանուցումը ներկայացնելու օրվան հաջորդող 7-րդ օրը)՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

Միաժամանակ Նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-733-05.03.2015-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-236 օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ «1.1» մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.
«1.1 Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող կարող են համարվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող այն առեւտրային կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատերերը, որոնք նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն, գործունեությունը վերսկսելու մասին իրենց հաշվառման վայրի հարկային մարմին համապատասխան հայտարարության ներկայացման օրվանից մինչեւ այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեւով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-733[1]-05.03.2015-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 13.8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ «3)» կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.
«3) նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին իր հաշվառման վայրի հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացրած անձը գործունեությունը վերսկսելու մասին իր հաշվառման վայրի հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացնելու օրվանից մինչեւ տվյալ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում շրջանառության հարկ կամ ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրվանից մինչեւ այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձեւով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն եւ ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

Գործող օրենսդրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բոլոր այն առեւտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը եւ նոտարը (բացառությամբ նոր ստեղծված) տվյալ տարվա ընթացքում կարող են համարվել շրջանառության հարկ վճարող եւ (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե մինչեւ տվյալ տարվա փետրվարի 20-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել համապատասխան հայտարարություն:

Սակայն, այն հարկ վճարողները, որոնք նախկինում հարկային մարմին էին ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն եւ մինչեւ հաշվետու տարվա փետրվարի 20-ը չեն ներկայացրել համապատասխան հայտարարություն շրջանառության հարկ վճարող համարվելու եւ (կամ) ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ, փետրվարի 20-ից հետո գործունեությունը վերսկսելու դեպքում պետք է հարկվեն հարկման ընդհանուր դաշտում, այսինքն՝ համարվեն ԱԱՀ վճարող:

Վերոնշյալը հաշվի առնելով անհրաժեշտ ենք համարում կատարել լրացումները համապատասխան օրենքներում, որպեսզի բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու (վերսկսելու) համար ստեղծվեն հավասար պայմաններ: